



Կապիտալ  
ինվեստմենթս

Հաստատված է «Կապիտալ Ինվեստմենթս»  
փակ բաժնետիրական ընկերության  
2017թ. ապրիլի 27-ի  
բաժնետերերի ընդհանուր ժողովում  
Գլխավոր տնօրեն Տ. Կարապետյան

---

27 ապրիլի 2017թ.

**«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ  
(նոր խմբագրությամբ)**

ԵՐԵՎԱՆ

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

- (ա) Սույն կանոնները ներառում են «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հաճախորդներին մատուցվող պահառության և ռեեստրի վարման ծառայությունների գները սահմանող և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող կանոններ:
- (բ) Սույն կանոնների անվանումն է ««Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության Պահառության և ռեեստրի վարման ծառայությունների գների մասին կանոններ», իսկ կրճատ անվանումը՝ «Պահառության և ռեեստրի վարման ծառայությունների գների մասին կանոններ»:

### Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն կանոնները բաղկացած են հետևյալ բաժիններից՝ Բաժին 1. «Ընդհանուր դրույթներ», Բաժին 2. «Թողարկողներին մատուցվող հիմնական և լրացուցիչ ծառայություններ», Բաժին 3. «Հաշվետերերին մատուցվող ծառայություններ», Բաժին 4. «Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններ», Բաժին 5. «Պետական պարտատոմսերի պահառության ծառայություններ», Բաժին 6. «Ծառայությունների գնի վճարում»:
- (բ) Բաժինները համարակալվում են արաբական թվերով:
- (գ) Վերնագրերը միավորում են Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Ռեեստրավարման և պահառության սակագների մասին կանոնների օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:
- (դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2.1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
  - (1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն)։
  - (2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2))։
  - (3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ))։
- (զ) Կանոններում հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝
  - (1) վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները։
  - (2) այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «1-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն» հղումը նշանակում է «1-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»։
  - (3) եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին, ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն»։
  - (4) Պահառության և ռեեստրի վարման ծառայությունների գների մասին որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «Պահառության և ռեեստրի վարման ծառայությունների գների մասին կանոնների» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին:

### Կանոն 1-3. Կանոնների ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- (ա) Կանոնները հաստատվում են «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:
- (բ) Կանոններն ուժը կորցրած են ճանաչվում «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ դրանք ուժը կորցրած ճանաչելու պահից:
- (գ) Կանոնների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության Պահառության և ռեեստրի վարման սակագների մասին կանոնները՝ հաստատված 2016 թվականի հունիսի 30-ին «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:
- (դ) Ընկերությունը Կանոնները պատշաճ ծանուցում է իր Հաճախորդներին: Պատշաճ է համարվում Ընկերության ինտերնետային կայքում Կանոնների տեղադրումը, ինչպես նաև Ընկերության գործունեության վայրում դրանց հրապարակումը:

### Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

- (ա) Կանոնները իրավական ակտ են և ընդունվում են համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Կենտրոնական Բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման, «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության և Սակագների մասին կանոնների:
- (բ) Կանոնները մեկնաբանվում են Ընկերության գործունեության կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և թողարկողների և հաշվետերերի իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

### Կանոն 1-5. Կանոնների կիրառման ոլորտը

- (ա) Կանոնները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի և այլ անձանց նկատմամբ, ովքեր օրենսդրությամբ և «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով օգտվում են «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության պահառության և ռեեստրի վարման ծառայություններից:
- (բ) Կանոնները չեն կիրառվում «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ:

### Կանոն 1-6. Հասկացություններ

(ա) Կանոններում կիրառվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Կենտրոնական Դեպոզիտարիայի կանոններով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված նշանակությունը, այդ թվում՝

- 1) «**Ընկերություն**». «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերություն.
- 2) «**Կենտրոնական դեպոզիտարիա**». «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն:
- 3) «**Ծառայությունների գին**». Հաճախորդի կողմից Ընկերությանը՝ նրա ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումար:

**ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Կանոն 2-1. Թողարկողներին մատուցվող արժեթղթերի հաշվառման ծառայություններ**

**(ա) Արժեթղթերի ընդհանուր հաշվառման (ռեեստրավարման) ծառայություններ**

(1) Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգ

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգ		Անվճար
Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգ		
Ֆոնդի կառավարչի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգ		

(2) Բաժնային արժեթղթերի (փայերի)<sup>1</sup> հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)

Ծառայության անվանումը	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) քանակ <sup>2</sup>	Ծառայության գինը <sup>3</sup>
<b>Բաժնային արժեթղթերի (փայերի) հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի)) ռեեստրի վարում և պահպանում</b>	1 տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 10000 ՀՀ դրամից
	2-ից մինչև 49-ը (ներառյալ) տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 12000 ՀՀ դրամից
	50-ից մինչև 99-ը (ներառյալ) տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 15000 ՀՀ դրամից

<sup>1</sup> Բացառությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի:

<sup>2</sup> Ընկերության տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

<sup>3</sup> Ծառայության գնի հաշվարկում չեն ներառվում այն բաժնային արժեթղթերը (փայերը), որոնց սեփականատերերի արժեթղթերի հաշվի պահպանումն իրականացվում է այլ հաշվի օպերատորի կողմից, եթե ծառայության գինը գերազանցում է նվազագույն սահմանը:

	100-ից մինչև 199-ը (ներառյալ) տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 20000 ՀՀ դրամից
	200-ից մինչև 499-ը (ներառյալ) տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 30000 ՀՀ դրամից
	500-ից մինչև 999-ը (ներառյալ) տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 40000 ՀՀ դրամից
	1000-ից և ավելի տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվ	Տվյալ դասի բաժնային արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեքի 0.001%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանած ամսական սակագինը ըստ արժեթղթերի հաշիվների քանակի, սակայն ոչ պակաս 80000 ՀՀ դրամից

(3) Մասնակցության վկայագրերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Մասնակցության վկայագրերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)</b>	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ <sup>4</sup> / ամսական	4500 ՀՀ դրամը/1-49-ը տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ
		6500 ՀՀ դրամը/50-99-ը տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ
		9000 ՀՀ դրամը/100-199-ը տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ
		15000 ՀՀ դրամը/200-499-ը տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ
		20000 ՀՀ դրամը/500-999-ը տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ
		35000 ՀՀ դրամը/ 1000-ից ավելի տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների քանակ

<sup>4</sup> Տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

(4) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)

**Փաթեթ 1**

Ծառայության անվանումը	Արժեթղթերի հաշիվների քանակ	Ծառայության գինը
Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	-	7000 ՀՀ դրամ

**Փաթեթ 2<sup>5</sup>**

Ծառայության անվանումը	Արժեթղթերի հաշիվների քանակ	Ծառայության գինը
Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	-	Փայերի ընդհանուր հաշվարկային արժեքի 0.0007%-ը գումարած Կենտրոնական Դեպոզիտարիայի սահմանաձև ամսական սակագինը, սակայն ոչ պակաս 7000 ՀՀ դրամից

(5) Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)<sup>6</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք / ամսական	մինչև 1 550 000 000 ՀՀ դրամը/ 0,0026%
		1 550 000 000 ՀՀ դրամից ավելի / 40 300 ՀՀ դրամ

(6) Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում	6 000 ՀՀ դրամ

(բ) Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների գինը տեղաբաշխման գործընթացի վերջում հաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով):

<sup>5</sup> Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի Կառավարչի կողմից փայերի հաշվառման 2-րդ փաթեթն ընտրելու դեպքում ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի մասնակիցների համար 3-1 (բ) (1) կետով նախատեսված ծառայությունները մատուցվում են անվճար:

<sup>6</sup> Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) է ռեեստրի վարման և պահպանման սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

- (1) Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի)<sup>7</sup> գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում, բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում</b>	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (փայերի դեպքում ծառայության գնի հաշվարկման հիմք է ընդունվում փայերի շուկայական արժեքը)	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,08%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 400 000 ՀՀ դրամ

- (2) Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում, բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)<sup>8</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում</b>	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 30 000 000 000 ՀՀ դրամը / 0,008%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը
		30 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 400 000 ՀՀ դրամ

- (3) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի տեղաբաշխված փայերի գրանցման հաշվառում (փայերի տեղաբաշխում)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի տեղաբաշխված փայերի գրանցման հաշվառում</b>	Հաշվարկման հիմք է ընդունվում փայերի հաշվարկային արժեքը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,07%, սակայն ոչ պակաս 1000 ՀՀ դրամը
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 100 000 ՀՀ դրամ

- (4) Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում</b>	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը / 0,06%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը
		1 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 600 000 ՀՀ դրամ

- (5) Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում</b>	Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,006%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը
		4 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 240 000 ՀՀ դրամ

<sup>7</sup> Բացառությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի:

<sup>8</sup> Արտաթոյթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի), ռեեստրի վարման և պահպանման սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

**(գ) Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում**

(1) Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում. ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում ծառայության գնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում ծառայության գնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)</b>	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,07%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամից
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 100 000 ՀՀ դրամ
<b>Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում</b>	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի ընդհանուր ծավալ	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,007%, սակայն ոչ պակաս 2 000 ՀՀ դրամից
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 210 000 ՀՀ դրամ
<b>Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում</b>	Հաշիվ	Անվճար

**(դ) Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ**

(1) Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում</b>	Ցուցակ	Անվճար
<b>Արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում անգլերեն կամ ռուսերեն</b>	Ցուցակ	5000 ՀՀ դրամ

(2) Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի (առանց հիմքերի) տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)</b>	տեղեկանք	3 000 ՀՀ դրամ



Տեղեկանքի տրամադրում (առձեռն)	տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	տեղեկանք	Հայերենի համար սահմանված սակագնի կրկնապատիկը՝ ըստ տրամադրման եղանակի

(3) Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (առձեռն)	տեղեկանք	12 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	տեղեկանք	Հայերենի համար սահմանված սակագնի կրկնապատիկը՝ ըստ տրամադրման եղանակի

(4) Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	տեղեկանք	14 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (առձեռն)	տեղեկանք	20 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	տեղեկանք	Հայերենի համար սահմանված սակագնի կրկնապատիկը՝ ըստ տրամադրման եղանակի

(5) Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում (առձեռն)	տեղեկանք	12 000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	տեղեկանք	Հայերենի համար սահմանված սակագնի կրկնապատիկը՝ ըստ տրամադրման եղանակի

(ե) **Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարչի հարցման հիման փայերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ**

(1) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
-----------------------	---------	------------------

Փայերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	Ցուցակ	Անվճար
Փայերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում ռուսերենով կամ անգլերենով	Ցուցակ	5000 ՀՀ դրամ

**(գ) Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ	-	Անվճար

**Կանոն 2-2. Թողարկողներին մատուցվող լրացուցիչ ծառայություններ**

**(ա) Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար / յուրաքանչյուր գործընթացի համար	0.2%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը

**(բ) Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված /բաշխված դրամական միջոցների գումարը / յուրաքանչյուր գործընթացի համար	0.02%, սակայն ոչ պակաս 20 000 ՀՀ դրամը

**(գ) Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Ծանուցում	Տարեկան	200 000 ՀՀ դրամ

**(դ) Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Հսկողության իրականացում	Տարեկան	700 000 ՀՀ դրամ

**ԲԱԺԻՆ 3. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Կանոն 3-1. Հաշվետերերին մատուցվող արժեթղթերի (ինվեստիցիոն) հաշիվների վարման ծառայություններ**

**(ա) Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ**

(1) Արժեթղթերի (փայերի)<sup>9</sup> հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի հաշվի բացում <sup>10</sup>	-	5000
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	-	Անվճար
Հաշվում առկա արժեթղթերի պահպանում (ծառայության գնի հաշվարկումը սկսվում է հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից և հաշվարկվում է մինչև տվյալ հաշվի փակման օրը (ներառյալ)) <sup>11</sup>	Յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա բոլոր դասերի արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեքների հանրագումար/ամսական	0,001%, սակայն ոչ պակաս 100 ՀՀ դրամը
Արժեթղթերի հաշվի փակում	-	Անվճար

(բ) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման հետ կապված ծառայություններ

(1) Արժեթղթերի հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի հաշվի բացում	-	5000
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	-	Անվճար
Հաշվում առկա փայերի պահպանում (ծառայության գնի հաշվարկումը սկսվում է հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից և հաշվարկվում է մինչև տվյալ հաշվի փակման օրը (ներառյալ)) <sup>12</sup>	Յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների հաշվարկային արժեքների հանրագումար/ամսական	0,0007%, սակայն ոչ պակաս 700 ՀՀ դրամը
Արժեթղթերի հաշվի փակում	-	Անվճար

(գ) Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ (Փոխանցման Ծառայության գինը չի գանձվում այն դեպքերում, երբ արժեթղթեր փոխանցող / ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)

(1) Բաժնետոմսերի (փայերի)<sup>13</sup> փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 3-1 (գ) (4), 3-1 (գ) (5), 3-1 (բ) (8) կանոններով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող կամ շահագրգիռ կողմը). ներառում է

<sup>9</sup> Բացառությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի:

<sup>10</sup> Արժեթղթերի հաշվի բացումն անվճար է այն արժեթղթերի մասով, որոնց թողարկողը Ընկերության հետ կնքել է ռեեստրի վարման պայմանագիր:

<sup>11</sup> Արժեթղթերի հաշվի պահպանումն անվճար է հաշվետիրոջ հաշվում առկա այն արժեթղթերի մասով, որոնց թողարկողը Ընկերության հետ կնքել է ռեեստրի վարման պայմանագիր:

<sup>12</sup> Արժեթղթերի հաշվի պահպանումն անվճար է, եթե ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարիչը ընտրել է 2-1 (ա) (4) կանոնով նախատեսված 2-րդ փայթեթը:

<sup>13</sup> Բացառությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի փայերի:

առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսը:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում (ներառյալ ազատ առաքումը՝ համաձայնությամբ), բացառությամբ ժառանգության հիմքի</b>	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 1 000 000 ՀՀ դրամը / 2 000 ՀՀ դրամ
		1 000 000 ՀՀ դրամից մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,2%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 6 000 000 ՀՀ դրամ
<b>Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում (ներառյալ ազատ առաքումը՝ համաձայնությամբ) ժառանգության հիմքով</b>	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	մինչև 1 000 000 ՀՀ դրամը / 1 000 ՀՀ դրամ
		1 000 000 ՀՀ դրամից մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,15%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 4 500 000 ՀՀ դրամ

(2) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Փայերի փոխանցում</b>	Փայերի հաշվարկային արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,07%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 100 000 ՀՀ դրամ

(3) Պարտատոմսերի փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 3-1 (գ) (4), 3-1 (գ) (5), 3-1 (գ) (8) կանոններով սահմանված դեպքերի. ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսը:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Պարտատոմսերի փոխանցում (ներառյալ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)</b>	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 2 000 000 ՀՀ դրամը / 400 ՀՀ դրամ
		2 000 000 ՀՀ դրամից մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,02%
		4 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 800 000 ՀՀ դրամ

(4) Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Ռեպո կամ հակադարձ ռեպո</b>	Հանձնարարագիր/վճարումը	18 000 ՀՀ դրամ

<b>գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում</b>	իրականացնում է յուրաքանչյուր կողմը	
------------------------------------------------------------	------------------------------------	--

(5) Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ.

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Պորտֆելի փոխանցում</b>	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է փոխանցող կողմը	6 000 ՀՀ դրամ

(6) Բաժնետոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Բաժնետոմսերի DVP փոխանցում</b>	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 1 000 000 ՀՀ դրամը/ 2 000 ՀՀ դրամ
		1 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,2%
		2 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 4 000 000 ՀՀ դրամ

(7) Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Պարտատոմսերի DVP փոխանցում</b>	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի, ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 10 000 000 ՀՀ դրամը/ 2 000 ՀՀ դրամ
		10 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,02%
		2 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 400 000 ՀՀ դրամ

(8) Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավառուն	Մինչև 140 000 000 ՀՀ դրամը/ 0.3%, սակայն ոչ պակաս 5000 ՀՀ դրամը
		140 000 000 ՀՀ դրամից ավելի/ 420 000 ՀՀ դրամ

(դ) **Արժեթղթերի գրավադրման, սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ**

(1) Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվում արժեթղթերի գրավադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Գրավադրում</b>	Գրավի առարկա արժեթղթերի ընդհանուր անվանական	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,07%, սակայն ոչ պակաս 5000 ՀՀ դրամը

	արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 100 000 ՀՀ դրամ
<b>Պարտատոմսերի գրավադրում</b>	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,02%
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 600 000 ՀՀ դրամ

(2) Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Սառեցում</b>	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/ վճարումը իրականացնում է հաշվետերը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,07%, սակայն ոչ պակաս 5000 ՀՀ դրամից
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 2 100 000 ՀՀ դրամ

(3) Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Առևտրային արգելադրում</b>		Անվճար

(4) Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում</b>	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0,5 %, սակայն ոչ պակաս 10000 ՀՀ դրամը

(5) Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում</b>	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Անվճար

(ե) **Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում**

(1) Հաշվետիրոջ հարցման հիման վրա տվյալ հաշվի օպերատորի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)։

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից)</b>	Քաղվածք	Անվճար

<b>քաղվածք)</b>		
<b>Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում</b>	Հաշվետվություն	Անվճար
<b>Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում</b>	Տեղեկանք	Անվճար
<b>Հաշվետվության տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>	Հաշվետվություն	8000 ՀՀ դրամ
<b>Քաղվածքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>	Քաղվածք	5000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>	Տեղեկանք	6000 ՀՀ դրամ

- (2) Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում առանց հիմքերի

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային եղանակով</b>	Տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում առձեռն</b>		7 000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

- (3) Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում հիմքերով

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային եղանակով</b>	Տեղեկանք	6 000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում առձեռն</b>		10 000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

- (գ) Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի մասնակցին (Հաշվետիրոջը) տեղեկությունների տրամադրում**

- (1) Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք)</b>	Քաղվածք	Անվճար
<b>Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում</b>	Հաշվետվություն	

Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	Տեղեկանք	5000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռուսերեն կամ անգլերեն)	Քաղվածք	
Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում (ռուսերեն կամ անգլերեն)	Հաշվետվություն	
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (ռուսերեն կամ անգլերեն)	Տեղեկանք	

(ե) Անվանատիրոջ հաշիվների բացման և հաշվում առկա արժեթղթերի պահպանման հետ կապված ծառայություններ

(1) Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	300 000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	0,001%

(2) Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	150 000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում	0,001%



	առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	
--	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--

(3) Ընկերության՝ անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերի համար պահառուական հաշիվների բացում, փոփոխություն և պահպանում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Արժեթղթերի հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) մնացորդների անվանական արժեք / ամսական	0,0006%

**ՔԱԺԻՆ 4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՅՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(ա) Արժեթղթերի պահպանման ծառայություն<sup>14</sup>

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ ֆոնդի փայերի) պահպանում	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված <sup>15</sup> սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Պարտքային արժեթղթերի պահպանում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի)		0,0015%
Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում		

(բ) Կորպորատիվ գործողություններ

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
-----------------------	---------	------------------

<sup>14</sup> ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո/ հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման սակագինը հաշվարկվում է արժեթղթերը փոխանցած կողմի նկատմամբ:

<sup>15</sup> Օտարերկրյա պահառուների միջոցով մատուցվող ծառայությունների սակագները (ինչպես նաև դրանց փոփոխությունները՝ ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ) հրապարակվում են Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին մատուցվող ծառայությունների:

Արժեթղթերից ստացվող եկամուտների մուտքագրում հաշվին	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Արժեթղթերի մարում		
Շահութաբաժինների վճարում		
Այլ պարտադիր գործողություններ		
Ոչ պարտադիր գործողություններ	Գործարքի առարկա արժեթղթերի ծավալ	
Ռայթերի առուվաճառք	Ըստ յուրաքանչյուր դեպքի	
Հարկերի պահում, հարկային հավատագրերի մշակում, հարկերի վերադարձման, ճշգրտման գործողություններ		

**(գ) Ժողովներին հեռակա մասնակցության ապահովում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Ծանուցումների ստացում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Օրակարգի ստացում		
Մուտքի քարտի պատվիրում		
Քվեարկության հանձնարարական կատարում		

**(դ) Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ**

Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի կատարում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Արժեթղթերի ֆիզիկական առաքման կամ ստացման հետ կապված ծախսեր (ներառյալ ապահովագրությունը)	Ըստ յուրաքանչյուր դեպքի	
Վերջնահաշվարկի խմբային հանձնարարականի (group matching) կատարում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	
Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի չեղարկում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	

**(ե) Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ**

Վերջնահաշվարկի ենթակա սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Դրամական միջոցների մուտքագրման և էլքագրման հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիային

կատարում (ներառյալ՝ preadvice հանձնարարականները)		օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	

**(գ) Հաշվետվությունների տրամադրում**

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
Կորպորատիվ գործողությունների ծանուցում	Ըստ յուրաքանչյուր ծանուցման	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 50% հավելագին
Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Հաշվում առկա արժեթղթերի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Սպասվող գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Արժեթղթերով վարկավորման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում ըստ շուկաների	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվետվությունների ուղարկում փոստով կամ էլ.փոստով	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հանձնարարականի հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Վերջնահաշվարկի հանձնարարականի կարգավիճակի հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվից ելքագրման կամ հաշվին մուտքագրման հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	

**ԲԱԺԻՆ 5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Կանոն 5-1. Դեպո հաշիվների վարման ծառայություններ**

(ա) **Դեպո հաշիվներում առկա պետական պարտատոմսերի պահպանման հետ կապված ծառայություններ**

(1) Դեպո հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Դեպո հաշվի բացում</b>		Անվճար
<b>Դեպո հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում</b>		Անվճար
<b>Դեպո հաշվում առկա արժեթղթերի պահպանում (Այս ծառայության դիմաց ծառայության գնի հաշվարկումը սկսվում է դեպո հաշվի բացման պահից)</b>	Յուրաքանչյուր ամսվա վերջին դեպո հաշվում առկա բոլոր պետական պարտատոմսերի մնացորդների անվանական արժեքների հանրագումար /ամսական	0,01% <sup>16</sup> , սակայն ոչ պակաս 500 ՀՀ դրամը
<b>Դեպո հաշվի փակում</b>		Անվճար

(բ) **Պետական պարտատոմսերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ<sup>17</sup>**

(1) Պետական պարտատոմսերի փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով (վճարում է փոխանցող կամ շահագրգիռ կողմը). ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա, ինչպես նաև ցանկացած այլ հիմքով պարտատոմսերի փոխանցում մեկ դեպո հաշվից մյուսը:

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Պետական պարտատոմսերի փոխանցում (ներառյալ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)</b>	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 50 000 000 ՀՀ դրամը / 1000 ՀՀ դրամ
		50 000 000 ՀՀ դրամից մինչև 4 000 000 000 ՀՀ դրամ / 0,005%
		4 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 200 000 ՀՀ դրամ

(2) Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում պետական պարտատոմսերի փոխանցում մեկ դեպո հաշվից մյուսին

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում</b>	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է փոխանցող կողմը	1 000 ՀՀ դրամ

(3) Պետական պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը

<sup>16</sup> Դեպո հաշվի պահպանումը անվճար է այն Հաճախորդների համար, որոնք Ընկերության հետ ունեն բրոքերային կամ հավատարմագրային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:

<sup>17</sup> Պետական պարտատոմսերի փոխանցումն անվճար է այն Հաճախորդների համար, որոնք Ընկերության հետ ունեն բրոքերային կամ հավատարմագրային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:

<b>Պարտատոմսերի DVP փոխանցում</b>	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի, ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 50 000 000 ՀՀ դրամը/ 1 000 ՀՀ դրամ
		50 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,01%
		2 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 200 000 ՀՀ դրամ

(4) Պետական պարտատոմսերի գրավի արտադատական կարգով իրացում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Պետական պարտատոմսերի գրավի արտադատական կարգով իրացում</b>	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Մինչև 140 000 000 ՀՀ դրամը/ 0.15%, սակայն ոչ պակաս 5000 ՀՀ դրամը
		140 000 000 ՀՀ դրամից ավելի/ 210 000 ՀՀ դրամ

(գ) **Պետական պարտատոմսերի գրավադրման (արգելադրման), ինչպես նաև պետական պարտատոմսերով ամրագրվող իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ**

(1) Պետական պարտատոմսերի գրավադրում (արգելադրում)

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Գրավադրում (արգելադրում)</b>	Գրավի առարկա պետական պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,03%, սակայն ոչ պակաս 5000 ՀՀ դրամը
		3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 900 000 ՀՀ դրամ

(2) Գրավի, արգելադրման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Գրավի, արգելադրման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում</b>	Գրավադրված, արգելադրված առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Անվճար

(դ) **Պետական պարտատոմսերի գծով տեղեկությունների տրամադրում**

(1) Դեպո հաշվից քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում

Ծառայության անվանումը	Միավորը	Ծառայության գինը
<b>Դեպո հաշվից քաղվածքի տրամադրում</b>	Քաղվածք	անվճար
<b>Դեպո հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի</b>	Տեղեկանք	3 000 ՀՀ դրամ

<b>տրամադրում, բացառությանը գործառնության օրը տրամադրվողի<sup>18</sup></b>		
<b>Քաղվածքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>	Քաղվածք	5000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքի տրամադրում ռուսերեն կամ անգլերեն</b>	Տեղեկանք	6000 ՀՀ դրամ

**ԲԱԺԻՆ 6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄ**

**Կանոն 6-1. Ծառայությունների գնի վճարում**

- (ա) Սույն կանոններով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է ՀՀ դրամով:
- (բ) Սույն կանոններով նախատեսված այն սակագները, որոնք չեն ներառում ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից: Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլրացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:
- (գ) Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:
- (դ) Ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով):
- (ե) Առանձին հաճախորդների համար Ընկերության իրավասու մարմնի որոշմամբ կարող են սահմանվել սույն կանոններում սահմանված սակագներից տարբերվող սակագներ, ընդ որում՝ նման սակագների սահմանման դեպքում Ընկերության իրավասու մարմնի որոշմամբ պետք է սահմանվեն այդ սակագների տրամադրման չափանիշները, որոնք կիրառելի կլինեն հաճախորդների տվյալ խմբի նկատմամբ:
- (զ) Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս թողարկողը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (2) և 2-1 (ա) (3) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 6 ամիսների համար թողարկողը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (2) և 2-1 (ա) (3) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 3-րդ ամսում:
- (է) Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարիչը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (4) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 6 ամիսների համար ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարիչը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (4) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 3-րդ ամսում:
- (ը) Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս թողարկողը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (5) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի՝ մինչ պարտատոմսերի մարումն ընկած ժամանակահատվածի գումարի չափով, եթե մարման ժամկետը չի գերազանցում 6 ամիսը: Պարտատոմսերի մարման ժամկետը 6 ամիսը գերազանցելու դեպքում Ընկերության

<sup>18</sup> Դեպո հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրումն անվճար է այն Հաճախորդների համար, որոնք Ընկերության հետ ունեն բրոքերային կամ հավատարմագրային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:

միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս թողարկողը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (5) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 6 ամիսների համար թողարկողը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (5) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 3-րդ ամսում: Կանխավճարի գումարը հաշվարկվում է նշված ժամկետի դրությամբ տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի հիման վրա:

- (թ) Եթե հաշվետիրոջ հաշվում հաշվառվում են բաժնետոմսեր (փայեր), մասնակցության վկայագրեր, ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի փայեր Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 3-1 (ա) (1) և 3-1 (բ) (1) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 6 ամիսների համար հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 3-1 (ա) (1) և 3-1 (բ) (1) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 3-րդ ամսում:
- (ժ) Եթե հաշվետիրոջ հաշվում հաշվառվում են պարտատոմսեր, ապա Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար մինչ այլ արժեթղթերի, այդ թվում՝ պարտատոմսերի մարումն ընկած ժամանակահատվածի գումարի չափով, եթե մարման ժամկետը չի գերազանցում 6 ամիսը: Պարտատոմսերի մարման ժամկետը 6 ամիսը գերազանցելու դեպքում Ընկերության միջնորդությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 3-1 (ա) (1) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 6 ամիսների համար հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 3-1 (ա) (1) Կանոնով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 3-րդ ամսում:
- (ժա) Յուրաքանչյուր ամսվա վերջին բանկային օրվա դրությամբ Ընկերությունն իրականացնում է վերահաշվարկ: Եթե թողարկողի (ոչ հրապարակային ֆոնդի կառավարչի) կամ հաշվետիրոջ կանխավճարի գումարը ավելի փոքր է, քան 2-1 (ա) (2), 2-1 (ա) (3), 2-1 (ա) (4), 2-1 (ա) (5) կամ 3-1 (ա) (1), 3-1 (բ) (1) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի ամսական գումարը, թողարկողը կամ հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2-1 (ա) (2), 2-1 (ա) (3), 2-1 (ա) (4), 2-1 (ա) (5) կամ 3-1 (ա) (1), 3-1 (բ) (1) Կանոններով սահմանված համապատասխան սակագնի 6 ամսվա գումարի չափով:
- (ժբ) Թողարկողի և հաշվետիրոջ կողմից Կանոններով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ժամկետներում համապատասխան սակագների գումարների վճարման չկատարման պարագայում Ընկերությունը համապատասխանաբար տվյալ թողարկողի/հաշվետիրոջ նկատմամբ կարող է հաշվարկվել տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,2%-ի չափով:
- (ժգ) Մատուցված ծառայությունների համար Կանոններում նշված վճարները Ընկերության կողմից կարող են գանձվել միակողմանիորեն (անակցեպտ) Ընկերության մոտ թողարկողի և հաշվետիրոջ ունեցած հաշիվներից, ինչպես նաև կանխավճարային գումարից:
- (ժդ) Քանի որ գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան ռեեստրի վարման և պահառության ծառայությունների հանձնում-ընդունում չի կիրառվում, պայմանագրի կնքման պահից մինչև կողմերի միջև հարաբերությունների դադարեցման պահը ռեեստրի վարման և պահառության ծառայությունները համարվում են մատուցված և հաճախորդի գրավոր առարկության բացակայության դեպքում՝ ընդունված յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:
- (ժե) Ընկերությունը կարող է մերժել ծառայության մատուցումը, եթե թողարկողը/հաշվետերը չի կատարել ծառայությունների դիմաց սահմանված վճարները:
- (ժզ) Ընկերությունն իրավունք ունի կասեցնել Կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս Ընկերության նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն կամ եթե թողարկողը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

- (ժէ) Ընկերությունն իրավունք ունի կասեցնել Կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս Ընկերության նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն կամ եթե հաշվետերը դատարանի ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:
- (ժը) 6-1 (ժգ) և 6-1 (ժէ) Կանոնների դրույթների կիրառման դեպքում Ընկերությունը 1-օրյա ժամկետում այդ մասին հայտնում է Կենտրոնական դեպոզիտարիային:
- (ժթ) 6-1 (ժգ) և 6-1 (ժէ) Կանոնների դրույթների կիրառման դեպքում կասեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:
- (հ) Ընկերությունն իրավունք ունի վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումը հետևյալ դեպքերում.
- (1) Եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է, ապա Ընկերությանը Թողարկողի կողմից վճարվում է ծառայությունների մատուցման վերսկսման համար նախատեսված վճար, որի հաշվարկման կարգը սահմանվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի Սակագների մասին կանոններով:
  - (2) Ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման վճարը հաշվարկելիս Ընկերության հիմնական դրույքաչափն է՝
    - ա. 10,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,
    - բ. 20,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,
    - գ. 30,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:
  - (3) Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է, ապա Ընկերությանը Հաշվետիրոջ կողմից վճարվում է ծառայությունների մատուցման վերսկսման համար նախատեսված վճար, որի հաշվարկման կարգը սահմանվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի Սակագների մասին կանոններով: